

եւ եդ զմատանին Միհրանայ ի վերայ: 162 Եւ կոչեաց ի ծառայիցն Միհրանայ տասն այր հաւատարիմ¹ եւ ետ² տանել զթուղթն³ առ Վաշիր⁴, որ զհազար արսն⁵ ունէր ընդ ինքեան⁶ եւ յԱպահուսիս Էր⁷. եւ առեալ⁸ գնացին:

163 Իսկ Վահան կոչեաց զնուիրական⁹ եւ ասէ. «Կոչեա՛¹⁰ գայս անուն իշխան». եւ կոչեաց: 164 Եւ իբրեւ գայր իշխանն եւ¹¹ մտանէր ընդ փողոցն խաւարչտին միայն¹², վեց այր աստի եւ¹³ անտի կային, եւ մինչդեռ կամէր մտանել¹⁴ ի սենեակն¹⁵, աճապարեալ ունէին զփողոցն¹⁶, զի մի՛ ձայն¹⁷ բարձեալ ճչիցէ¹⁸, եւ հարեալ դանակ ի սիրտն՝ ի միւս¹⁹ այլ սենեակն²⁰ ձգէին զդին²¹: 165 Եւ²² զնուիրական եւ զդպիրն վասն պատճառոյ²³ իրաց արկանել ետ²⁴ ի բանտ²⁵, եւ ինքն սկսաւ կոչել զիշխանսն խաբէութեամբ²⁶ ի խորհուրդ, եւ նենգով²⁷ այնպէս առնէր: 166 Եւ սպան²⁸ յաւուր յայնմիկ իշխանս ութսունվեց:

167 Եւ²⁹ իբրեւ զիշխանսն վճարեաց եւ գնաց³⁰ ի տաճարն, ուր զաւրթն էին Պարսից³¹, եւ ժողովեաց զնոսա ի ներս³² եւ զիւրն եւ զայլ³³ գաւառին ծառայսն³⁴ արտաքս եհան³⁵: 168 Եւ ինքն սկսաւ զնոսա վտանգել¹ բանիւք², թէ՛³ «Արժա՛ն Էր ձեզ զմար-

1 / հաւատարիմս / *hmo* կոչեալ (օ կոչել) ի հաւատարիմ ծառայիցն արս Ծ *փիւ* կոչեաց ի ... հաւատարիմ (2 տող) (*Isv*)

2 *s չիք* ետ

3 / զթուղթն

4 *Imsv* Վարշիր *փիւ* Վաշիր (*hnoq*)

5 *hmov* այրն *փիւ* արսն (*Is*)

6 օ ինքեան

7 / զԱպահուսիսն ունէր *փիւ* զհազար արսն ... յԱպահուսիս Էր (1 տող)

8 *hmov* առեալ զթուղթն

9 *h* զնուիրական

10 *hmov* երթ կոչեա

11 օ *չիք* եւ

12 *hmo չիք* միայն / / միայն ընդ փողոցն խաւարչտն *փիւ* ընդ փողոցն ... միայն

13 / *չիք* եւ

14 օ մտանել կամէր, *m* կամիլ մտանէր, / մտանէր *փիւ* կամէր մտանել (*hsv*)

15 / օ սենեկն

16 *hmov* փողիցն *փիւ* փողոցն (*Is*)

17 *s* ձայն ինչ

18 *s* ճչիցէ *փիւ* ճչեցէ (*l*) / *hmov* բարձցէ ի միւսն *փիւ* բարձեալ ճչեցէ

19 *v* մեւս

20 / սենեկ

21 *hmo* դանակովն (*hm* դանակով) ի (*m չիք* ի) սիրտն հարեալ՝ ձգէին ի միւս յարկն *փիւ* հարեալ դանակ ... ձգէին զդին (*Isv*)

22 *hm* ուր եւ / օ որ եւ

23 *sv* պատճառանաց, օ պատճառի *փիւ* պատճառոյ (*hm*)

24 *hmo* չեւ (օ ոչ ետ) տանել *փիւ* իրաց արկանել ետ (*Isv*)

25 *m* բանդն, *hsv* բանտն, օ բանդ *փիւ* բանտ (*l*)

26 *hmo* խաբէութեամբ կոչել (օ կոչեաց) զիշխանսն *փիւ* սկսաւ կոչել ... խաբէութեամբ (1 տող) (*Isv*)

27 *hmo* նենգիւ *փիւ* նենգով

28 *sv* եսպան

29 օ *չիք* Եւ

30 *hmov* վճարեցան իշխանքն գնաց ինքն *փիւ* զիշխանսն ... գնաց (*Is*)

31 *hmo չիք* Պարսից

32 *hmo* ժողովեալ *փիւ* եւ ժողովեաց ... ներս (*Isv*)

33 օ զայլ աւտար

34 *hmov* գաւառի (*v* գաւառին) մարդիկն ետ *փիւ* գաւառին ծառայսն (*Is*)

35 *hmo* հանել *փիւ* եհան (*Isv*)